ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

№ N 06-Լ «13» փետրվարի, 2020 թ.

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԵՐԿԱԿԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ, ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ԵՎ ՀՐԱՎԵՐԻ ՓԱԹԵԹԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգը հաստատելու մասին» N 1122 որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնադրության 19-րդ կետի 20-րդ ենթակետը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ ԵՄ

1. Կազմակերպել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հաշվին իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում երկակի նշանակության ծրագրերի աջակցության հայտերի ընտրության մրցույթ:
2. Հաստատել մրցույթի հայտարարության տեքստը՝ համաձայն Հավելված N 1-ի և հրավերի փաթեթը՝ համաձայն Հավելված N 2-ի:
3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյանին:

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 1
ՀՀ ԿԳՄՍ նախարարի
2020 թ. փետրվարի 13-ի
N 06-Լ հրամանի

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը հայտարարում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հաշվին իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում երկակի նշանակության ծրագրերի աջակցության հայտերի ընտրության **ՄՐՑՈՒՅԹ**:

Մրցույթին մասնակցելու հայտի դիմումը ներկայացվում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտե, մինչև **2020 թվականի մարտի 13-ը** ներառյալ, աշխատանքային օրերին ժամը 10:00 - 13:00 և 14:00 - 17:00, Օրբելի 22, 7-րդ հարկ, 708 սենյակ կամ ուղարկվում է փոստով (Երևան 0028, Օրբելի 22):

Մրցույթի հրավերի փաթեթը զետեղված է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի ինտերնետային կայքում (www.scs.am):

Մրցույթի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ և խորհրդատվություն կարելի է ստանալ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի գիտական քաղաքականության վարչությունում՝ աշխատանքային օրերին, ժամը 10:00 - 13:00 և 14:00 - 17:00, հեռ.՝ 21-01-40 (122):

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի
նախարարության գիտության կոմիտե

Հավելված N 2
ՀՀ ԿԳՄՍ նախարարի
2020 թ. փետրվարի 13-ի
N 06-Լ հրամանի

ՀՐԱՎԵՐ

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԵՐԿԱԿԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ

1. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի _____ -ի N _____ հրամանի համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե) հայտարարում է գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում երկակի նշանակության ծրագրերի աջակցությանն ուղղված գիտական թեմաների հայտերի (այսուհետ՝ Հայտ) ընտրության մրցույթ (այսուհետ՝ Մրցույթ):

2. Մրցույթի ֆինանսավորումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից՝ «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) հետազոտություններ» ծախսային ծրագրի «Երկակի նշանակության ծրագրերի աջակցության մրցույթ» ենթածրագրի միջոցներից: Երկակի նշանակության են համարվում այն ծրագրերը, որոնք ունեն խաղաղ նշանակություն, բայց կարող են կիրառվել ռազմական կարիքների համար:

3. Մրցույթն իրականացվում է գիտական և գիտատեխնիկական գործունեության «Բնական գիտություններ» և «Ճարտարագիտություն և տեխնոլոգիա» բնագավառների մի շարք մասնագիտություններով (հրավերի Հավելված N 1): Մրցույթի արդյունքում՝ մինչև 7 դրամաշնորհ կտրամադրվի 4-6 անձից բաղկացած գիտահետազոտական խմբերի (այսուհետ՝ Խումբ) նախաձեռնությամբ ներկայացված և մրցութային կարգով ընտրված ծրագրերին 12 կամ 24 ամիս ժամկետով, համապատասխանաբար մինչև 20 և 40 միլիոն ՀՀ դրամի չափով:

4. Հայտի ղեկավար կարող է հանդիսանալ մինչև 70 տարեկան (ում 70 տարին չի լրացել մինչև Հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրը), նշված բնագավառում առնվազն երեք տարվա գիտական կամ ճարտարագիտական գործունեության աշխատանքային ստաժ ունեցող անձը, ով ունի գիտական աստիճան կամ նախկինում

ղեկավարել է հայտով ներկայացվող բնագավառի ծրագրեր և ՀՀ պաշտպանության նախարարությունից ներկայացնում է այդ փաստը հավաստող փաստաթղթեր:

5. Կազմակերպությունում, որտեղ նախատեսվում է գիտական թեմայի կատարումը պետք է առնվազն հինգ տարի իրականացվի նշված բնագավառի գործունեություն:

6. Գիտական թեմայի կատարողները պետք է հանդիսանան Հայաստանի Հանրապետության մշտական բնակիչներ և թեմայի իրականացման ընթացքում պետք է բնակվեն Հայաստանում:

7. Խմբում պետք է ընդգրկվի մինչև 35 տարեկան առնվազն մեկ մասնագետ՝ գիտաշխատող, ասպիրանտ, մագիստրոս, դիպլոմավորված մասնագետ կամ մագիստրատուրայի ուսանող (հայտի հետ ներկայացնել մինչև 35 տարեկան մասնակցի (մասնակիցների) ասպիրանտ կամ մագիստրատուրայի ուսանող հանդիսանալու մասին տեղեկանքը, որտեղ նշված են մասնագիտությունը և ուսուցման տարին, ինչպես նաև մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի դիպլոմի պատճենը)**:**

8. Մրցույթին չեն կարող մասնակցել Կոմիտեի կողմից ֆինանսավորվող միաժամանակ երկու մրցութային (այդ թվում՝ միջազգային) գիտական թեմաների (ծրագրերի) ղեկավարները կամ կատարողները (բացառությամբ անհատական խրախուսման մրցույթների շահառուների), եթե այդ թեմաները (ծրագրերը) չեն ավարտվում մինչև սույն Մրցույթի արդյունքում երաշխավորված թեմաների ֆինանսավորման սկիզբը:

9. Մրցույթի շրջանակներում որևէ անձ չի կարող ընդգրկվել մեկից ավելի Հայտերում, ինչպես նաև Մրցույթի արդյունքում ֆինանսավորվող մեկից ավելի գիտական թեմաներում:

10. Հայտը՝ թղթային և էլեկտրոնային տարբերակներով պետք է ներկայացվի հրավերի Հավելված N2-ի պահանջներին համապատասխան:

11. Ֆինանսական նախահաշիվը կազմելիս պետք է օգտվել Հայտի ֆինանսական նախահաշիվ ներկայացնելու ուղեցույցից (հրավերի Հավելված N3):

12. Հայտի ղեկավարի ստորագրությունը պետք է լինի կազմակերպության ղեկավարի կամ գիտական քարտուղարի ստորագրությամբ հաստատված**:**

13. Հայտը կարելի է ներկայացնել մինչև 2020 թվականի մարտի 13-ը ներառյալ:

14. Հայտը, ղեկավարի դիմումով, Կոմիտե է ներկայացվում առձեռն՝ աշխատանքային օրերին ժամը 10:00-13:00 և 14:00-17:00 (Օրբելի եղբայրների 22, 8-րդ հարկ, 805 սենյակ) կամ փոստով (Երևան 0028, Օրբելի եղբայրների 22):

15. Խմբի անունից հանդես է գալիս միայն Խմբի ղեկավարը:

16. Հայտը չի քննարկվի, եթե այն.

- բովանդակությամբ համընկնում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվող կամ ֆինանսավորված որևէ Թեմայի կամ ծրագրի հետ,
- նախագծի հեղինակի կողմից նախկինում իրականացված Թեմայի վերաբերյալ հաշվետվություն (այսուհետ՝ Հաշվետվություն) չի ներկայացվել կամ վերջինիս վերաբերյալ մասնագիտական փորձագիտական խորհրդի (ասուհետ՝ Խորհուրդ) կողմից տրվել է բացասական եզրակացություն,
- միաժամանակ ներկայացված է Կոմիտեի կողմից անցկացվող այլ մրցույթների:

17. Հայտերը անցնում են տեխնիկական ստուգում և տրամադրվում են Կոմիտեի նախագահի հրամանով ստեղծված մասնագիտական փորձագիտական խորհրդին (այսուհետ՝ Խորհուրդ), որը 20 աշխատանքային օրվա ընթացքում իրականացնում է գիտական փորձաքննություն իր կողմից սահմանված կարգով:

18. Ներկայացված Հայտերը կարծիք ստանալու նպատակով տրամադրվում են նաև ՀՀ ռազմարդյունաբերության կոմիտե:

19. Գիտական փորձաքննության ժամանակ գնահատվում են գիտական թեմայի արդիականությունը, իրականացման նախադրյալները, Խմբի ղեկավարի և կատարողների մասնագիտական որակավորման համապատասխանությունը նախատեսված հետազոտությունների իրականացմանը, թեմայի կատարման ժամկետները, ֆինանսական նախահաշվի հիմնավորվածությունը, ինչպես նաև գիտության տվյալ բնագավառի (մասնագիտության) առանձնահատկություններից բխող այլ հարցեր: Հայտերի գիտական փորձաքննությունը իրականացնելիս Խորհուրդը կարող է պահանջել Հայտի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն: Ֆինանսավորման երաշխավորելիս առաջնահերթությունը տրվում է արդեն իսկ երկակի նշանակության ծրագրեր իրականացնողներին և ՌԱԿ-ի կողմից դրական կարծիքի արժանացած ծրագրերին:

20. Խորհուրդը, Հայտերի փորձաքննական գնահատականների նվազման կարգով, ձևավորում է վարկանիշային ցանկ և ներկայացնում է Կոմիտեի նախագահին:

21. Կոմիտեի նախագահը ելնելով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում երկակի նշանակության ծրագրերին աջակցության մրցույթի համար հատկացումների չափից և Մրցույթի արդյունքներից՝ հաստատում է Մրցույթի արդյունքներով ֆինանսավորման երաշխավորված ծրագրերի ցանկը և յուրաքանչյուր

ծրագրին հատկացվող ֆինանսավորման չափը՝ ըստ գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառների և մասնագիտությունների:

22. Կոմիտեն գիտական թեմաների ղեկավարներին տրամադրում է Հայտերի գիտական փորձաքննության գնահատականը և տվյալ բնագավառի (մասնագիտության) շեմային գնահատականը:

23. Մրցույթի արդյունքում ֆինանսավորման երաշխավորված գիտական թեմաների ցանկը և դրանց ղեկավարների ցուցակը զետեղվում են Կոմիտեի կայքում՝ www.scs.am:

24. Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքով» սահմանված կարգով կնքվում է պայմանագիր գիտական թեմայի ղեկավարի և կատարողների միջև, ինչպես նաև գիտական կազմակերպության (բուհի) տնօրենի (ռեկտորի) և Խմբի (գիտական թեմայի) ղեկավարի միջև («Ծառայությունների մատուցման պայմանագիր»):

25. Կոմիտեի և ֆինանսավորման երաշխավորված գիտական թեմայի ղեկավարի միջև Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքով» սահմանված կարգով կնքվում է «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում երկակի նշանակության ծրագրերի աջակցությանն ուղղված պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին» պայմանագիր:

26. Թեմայի իրականացման ընթացքում Կոմիտե է ներկայացվում ընթացիկ (12-ամսյա), իսկ ավարտից հետո՝ ամփոփիչ Հաշվետվություն, որոնք ենթարկվում են գիտական փորձաքննության:

27. Թեմայի ֆինանսավորումը դադարեցվում է ընթացիկ (12-ամսյա) Հաշվետվությունը սահմանված ժամկետում չներկայացնելու կամ վերջինիս վերաբերյալ Խորհրդի բացասական եզրակացության հիման վրա:

Հավելված N 1

Երկակի նշանակության ծրագրերի
ֆինանսական աջակցության գիտական թեմաների
հայտերի մրցույթի հրավերի

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԸ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԴԱՍԻՉՆԵՐՈՎ

1. ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.2 Ինֆորմատիկա և համակարգչային գիտություններ

1.3 Ֆիզիկա և աստղագիտություն

1.4 Քիմիա

1.6 Կենսաբանական գիտություններ

2. ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ

2.2 էլեկտրատեխնիկա, էլեկտրոնիկա, էներգետիկա, համակարգչային և տեղեկատվական տեխնոլոգիաներ

2.3 Մեխանիկա

2.4 Մեքենագիտություն և մեքենաշինություն

2.5 Քիմիական տեխնոլոգիաներ

2.6 Նյութագիտություն

2.9 Կենսատեխնոլոգիա

2.10 Նանոտեխնոլոգիա

Հավելված N 2

Երկակի նշանակության ծրագրերի
ֆինանսական աջակցության գիտական թեմաների
հայտերի մրցույթի հրավերի

ՀԱՅՏ
ԵՐԿԱԿԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾԻ

Ի. ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

Նախագծի անվանումը[1]

Բնագավառը, մասնագիտությունը	

Իրականացման ժամկետը (ամիս)	
Հիմնական կատարողների թիվը	
Պահանջվող ֆինանսավորման ծավալը (նախագծի ընդհանուր արժեքը)	հազ. դրամ

Նախագծի ղեկավարի տվյալները

Ազգանունը, անունը, հայրանունը	
Ծննդյան տարեթիվը	
Գիտական աստիճանը	
Պաշտոնը	
Հեռախոսը	
Էլեկտրոնային փոստի հասցեն	

[1] *Դատարկ դաշտերը նախատեսված են տեքստը շարադրելու համար:*

Կազմակերպության տվյալները

Գերատեսչությունը	
Կազմակերպության լրիվ անվանումը և կազմակերպաիրավական ձևը	
Հասցեն	
Հեռախոսը	
Էլեկտրոնային փոստի հասցեն	
Կայք էջը	
Կազմակերպության ղեկավարի Ա.Ա.Հ.	
Կազմակերպության ղեկավարի կամ գիտական քարտուղարի ստորագրությունը	

II. ՆԱԽԱԳԾԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Անվանումը

Բնագավառը

Համառոտ բնութագիրը հայերեն (անոտացիա, մինչև 0.5 էջ)

Համառոտ բնութագիրը ռուսերեն (անոտացիա, մինչև 0.5 էջ)

Համառոտ բնութագիրը անգլերեն (անոտացիա, մինչև 0.5 էջ)

Բանալի բառերը (մինչև 10 բառ)

Ընդհանուր բնութագիրը (մինչև 1.5 էջ)

Նպատակը և խնդիրները (մինչև 1 էջ)

Արդիականությունը (մինչև 1 էջ)

Գիտատեխնիկական հենքը[2] (մինչև 5 էջ)

Նախագծի կատարողների ձեռքբերումները

[2] *Ներկայացնել նախագծի գիտական կամ գիտատեխնիկական բաղադրիչի բովանդակությունը, երկակի նշանակության իրականացվելիք խնդիր(ներ)ի կարևորությունը, ինչպես նաև նախագծի իրականացման ճանապարհները և նպատակ(ներ)ին հասնելու համար անհրաժեշտ կատարողների կազմը, նկարագրել նախագծի իրականացման համար առկա և անհրաժեշտ նյութական ռեսուրսները:*

Ակնկալվող արդյունքը

Ակնկալվող արդյունքի՝

1. տեխնիկական ցուցանիշները

2. կիրառության բնագավառները

Նման օրինակների հետ համեմատության ցուցանիշները՝

հիմնական տեխնիկական առավելությունները / ցուցանիշները

հիմնական տնտեսական առավելությունները / ցուցանիշները

հիմնական բնապահպանական առավելությունները / ցուցանիշները

այլ (լրացնել հաջորդող վանդակում)

III. ՆԱԽԱԳԾԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ

Ազգանունը, անունը, հայրանունը	
Կրթությունը (բուհ, մասնագիտություն)	
Գիտական աստիճանը	
Հրատարակված գիտական հոդվածների և մենագրությունների քանակը	
Ներկայացվող բնագավառում իրականացված աշխատանքների վերաբերյալ հոդվածների և մենագրությունների քանակը	
Ներկայացվող բնագավառում իրականացված աշխատանքների վերաբերյալ այլ տեղեկություններ	
Արտոնագրերի քանակը, այդ թվում՝ գործող	
Վերջին 5 տարում հրատարակված գիտական հոդվածները (նշել վերնագիրը, ամսագիրը, տարին, հատորը, էջերը)	
Վերջին 5 տարում ստացած դրամաշնորհները (նշել վերնագիրը, որտեղից է ստացվել, ժամկետը, ֆինանսավորման ծավալները)	

«____» _____ 2020թ. _____

(ղեկավարի ստորագրությունը)

IV. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԱԽԱԳԾԻ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ազգանունը, անունը, հայրանունը	
Ծննդյան տարեթիվը	
Կրթությունը (բուհ, մասնագիտություն)	
Գիտական աստիճանը	
Աշխատանքի վայրը, պաշտոնը	
Հեռախոս (աշխատանքային, բջջային)	
Էլեկտրոնային հասցեն	

V. ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՑԱՆԿ[3]

3 *Ներկայացնել նախատեսվող հետազոտությունների ուղղությամբ նախագծի մասնակիցների կողմից վերջին հինգ տարիներին հրատարակած աշխատությունները (գիտական հրապարակումներ, արտոնագրեր, գիտաժողովների զեկույցներ, ներդրումներ և այլ նյութեր)՝ նշելով հեղինակին (հեղինակներին), վերնագիրը, ամսագիրը կամ հրատարակությունը, տարին, հատորը, համարը, էջերը: Արտոնագրի դեպքում նշել հեղինակին, երկիրը, դասիչը, անվանումը, սեփականատիրոջը, ժամկետը: Այլ հրապարակումները ներկայացնել ընդունված պահանջներին համապատասխան:*

VI. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆԱԽԱՀԱՇԻՎ[4]

Նախագծի անվանումը _____

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ (ներառյալ եկամտային հարկը, հազար դրամ)									
	2020			**2021**			**2022**		
Ազգանուն, անուն, հայրանուն	Ամսական	Ամիսների քանակը	Դահանջվող գումարը	Ամսական	Ամիսների քանակը	Դահանջվող գումարը	Ամսական	Ամիսների քանակը	Դահանջվող գումարը
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ									

ԱՅԼ ԾԱԽՍԵՐ, այդ թվում			
1. ՍԱՐՔԵՐ ԵՎ ՆՅՈՒԹԵՐ (թվարկել 150000 ՀՀ դրամը գերազանցող բոլոր ծախսերը, հիմնավորվել նախահաշվի մեկնաբանության մեջ)	**2020**	**2021**	**2022**
1)			
2)			
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ			
2. ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐ (հիմնավորել նախահաշվի մեկնաբանության մեջ)			
1) տեղական գործուղումների տրանսպորտային ծախսեր			
2) տեղական գործուղումների օրապահիկ			
3) տեղական գործուղումների գիշերավարձ			
4) օտարերկրյա գործուղումների տրանսպորտային ծախսեր			
5) օտարերկրյա գործուղումների օրապահիկ			
6) օտարերկրյա գործուղումների գիշերավարձ			
7) գործուղումների հետ կապված այլ ծախսեր (վիզա կամ այլ վճարումներ)			
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ			
3. ԵՆԹԱՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ (նշել ենթապայմանագրային համագործակցության բոլոր ֆիզիկական և իրավաբանական անձանց, համագործակցությունը			

[4] *Լրացնել առաջնորդվելով նախագծի Հայտի ֆինանսական նախահաշիվ ներկայացնելու ուղեցույցով (Հավելված N3):*

մանրամասն նկարագրել նախահաշվի մեկնաբանության մեջ)									
Ենթապայմանագրային համագործակցության վարձավճար									
	2020			**2021**			**2022**		
Անուն, ազգանուն, հայրանուն	Օրավարձ	Օրեր	Գումարը, հազ. դրամ	Օրավարձ	Օրեր	Գումարը, հազ. դրամ	Օրավարձ	Օրեր	Գումարը, հազ. դրամ
1)									
2)									
3)									
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ									

Ենթապայմանագրային համագործակցության նյութեր և ծառայություններ (Թվարկել 150000 ՀՀ դրամը գերազանցող բոլոր կետերը և հիմնավորել)	**2020**	**2021**	**2022**
1)			
2)			
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ			
4. ՎԵՐԱԴԻՐ ԾԱԽՍԵՐ			
ՀԱՅՑՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ			
ԱՅԼ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ ՍՏԱՑՎՈՂ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ (ներկայացնել ֆինանսական նախահաշվի մեկնաբանության մեջ)			

Կազմակերպության ղեկավար

_____ (Ա.Ա.Հ.) _____

(ստորագրություն)

Գլխավոր հաշվապահ

_____ (Ա.Ա.Հ) _____

(ստորագրություն)

VII. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆԱԽԱՀԱՇՎԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ[5]

[5] *Բացատրել և հիմնավորել ֆինանսական նախահաշվի 150 000 դրամը գերազանցող բոլոր կետերը:*

Հավելված N 3

Երկակի նշանակության ծրագրերի
ֆինանսական աջակցության գիտական թեմաների
հայտերի մրցույթի հրավերի

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԵՐԿԱԿԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆԱԽԱՀԱՇԻՎ ԿԱԶՄԵԼՈՒ

1. Ֆինանսական նախահաշիվը պետք է ներկայացնել առանձին տարիների համար՝ պահպանելով ընդհանուր գումարի միևնույն չափը:
2. Ֆինանսական նախահաշվի «Աշխատանքի վարձատրություն» հոդվածը կազմելիս պետք է Կատարողների աշխատանքի ամսական վարձատրության միջին հաշվարկային չափն ընդունել մինչև 150 000 (մեկ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:
3. Աշխատանքի վարձատրության համար նախատեսվող գումարը չպետք է գերազանցի յուրաքանչյուր տարվա համար նախատեսված գումարի 50 տոկոսը:
4. Եթե աշխատանքի վարձատրության համար նախատեսված գումարը պակաս է վերոնշյալ ծավալից, ապա տարբերությունը կարելի է օգտագործել Նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածում:
5. Ֆինանսական նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածով կարող են նախատեսվել գիտական սարքավորումների և գիտական հետազոտությունների ընթացքում օգտագործվող այլ նյութերի ձեռքբերման ծախսեր: 150000 (մեկ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը գերազանցող սարքավորման կամ ծառայության անհրաժեշտությունը պետք է հիմնավորել նախահաշվի մեկնաբանության մեջ:
6. Ֆինանսական նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածով գործուղումների համար նախատեսվող գումարը կարող է օգտագործվել ինչպես տեղական, այնպես էլ օտարերկրյա գիտական միջոցառումներին մասնակցելու համար: Գործուղման նպատակը և դրա հետ կապված բոլոր ծախսերը պետք է հիմնավորվեն նախահաշվի մեկնաբանության մեջ: Մինչև երկու շաբաթ տևողությամբ գործուղումների համար օրապահիկը և գիշերավարձը պետք է հաշվարկել ըստ Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմամբ սահմանված ծախսերի չափերի: Երկու շաբաթը գերազանցող գործուղումների համար նախագծի հիմնական կատարողները կարող են հայցել ամսական մինչև 1 500 (մեկ հազար հինգ հարյուր) ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ, ընդ

որում՝ տարեկան կտրվածքով օտարերկրյա գործուղումների ընդհանուր ժամանակը չպետք է գերազանցի երկու ամիսը:

7. Փորձարարական բնույթի թեմաների համար ֆինանսական նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածով կարող է նախատեսվել ենթապայմանագրային համագործակցություն. տվյալ գիտական թեմայի իրականացման համար Խմբի ղեկավարը ֆիզիկական կամ իրավաբանական անձանց հետ կնքում է պայմանագիր և այն համաձայնեցնում Կոմիտեի հետ: Ենթապայմանագրային համագործակցության ծախսերը չպետք է գերազանցեն դրամաշնորհի «Այլ ծախսեր» հոդվածով նախատեսված գումարի 30 տոկոսը: Ֆինանսական նախահաշվի մեկնաբանության մեջ յուրաքանչյուր ենթապայմանագրային համագործակցության համար պետք է ներկայացնել առանձին հիմնավորում:

8. Նյութերի ձեռք բերման համար նախատեսված գումարը չպետք է գերազանցի «Այլ ծախսեր» հոդվածով նախատեսված գումարի 20 տոկոսը:

9. Ֆինանսական նախահաշվի «Վերադիր ծախսեր» հոդվածով նախատեսվում են գիտական կազմակերպության (բուհի) տնօրենի (ռեկտորի) իրավասությանը թողնված ֆինանսական միջոցները, որոնցով տնօրենը (ռեկտորը) ապահովում է գիտական կազմակերպության (բուհի գիտական մասի) գործունեությունը և ստեղծում թեմայի կատարման համար անհրաժեշտ պայմաններ: Վերադիր ծախսերը չպետք է գերազանցեն դրամաշնորհի «Այլ ծախսեր» հոդվածով նախատեսված գումարի 10 տոկոսը:

10. Նախագծի իրականացման անհրաժեշտությունից ելնելով՝ նախագծի ֆինանսական նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածով հատկացված գումարը, Կոմիտեի համաձայնությամբ, կարող է վերաբաշխվել տարեկան մեկ անգամ՝ չգերազանցելով նրա 10 տոկոսի չափը:

Հավելված N 4
Երկակի նշանակության ծրագրերի
ֆինանսական աջակցության գիտական թեմաների
հայտերի մրցույթի հրավերի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՀԱՅՈՑՅԱՆԻՆ

ՔԱՂԱՔԱՑԻ_____
(անուն հայրանուն)
_____ ից
(ազգանուն)
_____
(հասցե)
_____
(հեռախոս)

Դ Ի Մ Ո Ւ Մ

Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում Երկակի նշանակության ծրագրերի ֆինանսական աջակցության գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթին մասնակցելու նպատակով ներկայացնում եմ «_____
_____»
ծրագրի նախագիծը:

Խնդրում եմ սահմանված կարգով ընթացք տալ:

Դիմող՝ _____ (_____)
(ստորագրություն) (անուն, ազգանուն)

«____» _____ 2020 թ.